*ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՍՈՐԻՆԵՐԸ. ԿՐՈՆԱ-ԱՎԱՆԴԱԿԱՆ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՆԵՐ

Լիլիթ Սիմոնյան, Կարեն Հովհաննիսյան

Ներածություն

Հայաստանաբնակ ասորիների մասին ազգագրական ուսումնասիրությունները քիչ են: Ե. Լալայանի «Վասպուրականի ասորիները»[1], որը մինչև օրս ոլորտում հայալեզու միակ փոքրիշատե ամբողջական տեղեկատվական նյութն է, և Արևմտյան Հայաստանի և Պարսկահայքի ասորիների վերաբերյալ հատուկենտ հաղորդումները ռուսալեզու և արևմտաեվրոպական հեղինակների մոտ որոշ չափով պատկերացում են տալիս 18-19-րդ դդ. ասորիների կենցաղի և սովորությունների մասին: Ինչպես Լալայանը, այնպես էլ հայ մյուս հեղինակները չեն անդրադարձել, մասնավորապես, ասորիների տոներին, սրբերի օրերին և ուխտագնացություններին: Այդ հարցի շուրջ միակ հասանելի աղբյուրը մնում է Պ. Էյվազովի՝ Կոյլասար (ներկայումս՝ Արարատի մարզի Դիմիտրով) գյուղի 19-րդ դ. վերջին քառորդին վերաբերող նյութը[2]:

Սույն ոչ մեծ հաղորդման շրջանակներում փորձել ենք ի մի բերել ասորական ազգային-կրոնական և ավանդական տոնակատարությունների մասին հնարավոր աղբյուրները՝ ճշտելով դրանք դաշտային ոչ մեծածավալ աշխատանքի միջոցով[3]: Այդ ճշտումներն էլ ավելի անհրաժեշտ

---

* Հոդվածը ներկայացվել է 15.03.2020 թ., գրախոսվել է 10.04.2020թ., ընդունվել է տպագրության 01.05.2020 թ.:

1 **Ե. Լալայեան**, Վասպուրականի ասորիները, ԱՀ, գ. XXIV, Թիֆլիս, 1913, էջ 181-232:

2 **П. Эйвазовъ**, Нѣкоторыя свѣдѣнія о селѣ Койласарё и объ Айсорахъ, СМОМПК, вып. IV, Тифлисъ, 1884, отд. I, с. 284-326, տոների վերաբերյալ բաժինը՝ էջ 318-319, 323-324: Ցավոք, այս նյութը չափազանց սուղ է մեր ուսումնասիրության համար, քանի որ դրանում տրված չեն ո՛չ տոների տեղական անվանումները, ո՛չ դրանց ժամկետները, ո՛չ իսկ ամբողջական ցանկը, այլ միայն Կյուրեղի և Յուղիտայի և Ս. Աստվածածնի Վերափոխման տոների կարճ բնութագրերը:

3 **Լ. Սիմոնյան**, **Կ. Հովհաննիսյան**, Դաշտային ազգագրական նյութեր (ԴԱՆ), Դվին, 2016, Արզնի, 2019, Դվին, 2019: Լ. Սիմոնյան ԴԱՆ, Նոր Արտագերս, 2019:

են, քանի որ գրավոր գրեթե բոլոր տեղեկությունները քաղված են օտար, ոչ հարազատ աղբյուրներից, համապատասխանաբար, սխալ արտասանություններով, իսկ երբեմն էլ՝ թարգմանված տերմիններով, որոնցից պարզ չէ տոնի կամ սրբի անունը:

Նման հետազոտությունը կապված է որոշակի դժվարությունների հետ, որոնցից առաջինը խորհրդային տարիների ընթացքում կրոնական հարցերի շուրջ ուսումնասիրությունների, մասնավորապես՝ ազգային տոներին վերաբերող դաշտային ազգագրական նյութի բացակայությունն է, որի պատճառով զրկված ենք տոնական ավանդույթների պահպանման, փոփոխության, փոխառությունների և փոխազդեցությունների ամբողջ ընթացքը և պատճառները դիտարկելու հնարավորությունից: Երկրորդը վերաբերում է կրոնական-պաշտոնական և ժողովրդական տոների խնդրին, որը ասորիների դեպքում չափազանց բարդեցված է՝ այդ ժողովրդի ներկայացուցիչների վրա 16-20-րդ դդ. մյուս Եկեղեցիների ուսմունքների և ծեսերի ազդեցությունների պատճառով: Բացի այդ, պատմության բերումով, գոյություն ունի որոշակի տարբերություն տարբեր պետական կազմավորումների սահմաններում ապրած ասորիների սովորույթների միջև: Վերջապես, երրորդ դժվարությունը անխուսափելի սուբյեկտիվիզմն է, որը բխում է որքանով էլ հարևան, բայց այլ մշակույթի ուսումնասիրության փաստից ինքնին:

Այդուհանդերձ, ընտրված ***ֆենոմենոլոգիական մեթոդը***, ուսումնասիրության ***անմիջական դիտումների և մասնակցության ու հարցազրույցների*** միջոցով հետևողական ճշտումների եղանակները՝ իրենց աշխատատարությամբ հանդերձ, տալիս են որոշակի օբյեկտիվ արդյունքներ:

Առաջին փորձը լինելով՝ ուսումնասիրությունը հեռու է լիարժեք համարվելուց, դրա արդյունքում դուրսբերված օրինաչափությունները և կատարված եզրակացությունները ևս նախնական են և պահանջում են հետագա ավելի մանրակրկիտ ուսումնասիրություն:

Հայաստանաբնակ ասորիների մեծ մասը ներկայիս բնակավայրեր է տեղափոխվել 1826-1828 թթ.՝ Թուրքմենչայի պայմանագրից հետո, գլխավորապես՝ հայ ազգաբնակչության հետ համատեղ և միաժամա-

---

Ուսումնասիրությունների ընթացքում կարևոր աջակցության համար մեր խորին երախտագիտությունն ենք հայտնում Արևելքի Ասորի Առաքելական Ս. Եկեղեցու քահանա **Կաշա Նիկադիմ Յուխանանին** և արևելագետ **Արաքսյա Ավչիևային**:

նակ: Ավանդաբար հաղորդվում է, որ 100 տուն (ընտանիք) է տեղափոխվել Ուրմիայի 50 գյուղերից: Հետևաբար, նրանց մեծ մասը Իրանի Ուրմիայի շրջանի քաղաքային և գյուղական բնակիչների սերունդներն են: Այդուհանդերձ, նրանց մեջ կան նաև ավելի վաղ և ավելի ուշ (մասնավորապես, 1802 և 1918 թ. քաղաքական բարդ իրադրության հետևանքով գաղթածների և ցեղասպանությունից փրկվածների) Օսմանյան Թուրքիայի Հաքյարի (Ջուլամերկ) շրջանից միևնույն Իրանի ճանապարհով տեղափոխվածների սերունդներ: Սկսած առնվազն 1920 թ. այդ փոքրաթիվ ժողովուրդը Արևելյան Հայաստանում ունեցել է համատեղ պատմություն խորհրդային այլ ժողովուրդների հետ՝ ենթարկվելով անխուսափելի մշակութային համահարթեցմանը (հաշվի առնելով ինչպես ցարական Ռուսաստանի, այնպես էլ խորհրդային ժամանակահատվածի քաղաքականությունը):

Ի հեճուկս պատմական դաժան ճակատագրի և կրոնական հետապնդումների, ասորիները կարողացել են պահպանել իրենց ավանդական տոնակատարությունների բազմաթիվ տարրեր:

Հետազոտությունը կատարվել է «Միջճյուղային կրոնագիտական կենտրոնի» աջակցությամբ:

Տոմարային տոներ

Ասորիները համընդհանուր գրիգորյան տոմարի կողքին այսօր էլ կիրառում են իրենց էթնիկ արմատների հետ կապված հնամենի Նիպուրի տոմարի մի տեսակը, որը ինչպես հայտնի է, նրանց միջնորդությամբ, գործածության մեջ է եղել նաև Տարոնի, Մոկսի, Սասունի հայերի և քրդերի մեջ[1]:

Հայաստանի ասորիների տոները ցուցաբերում են հետաքրքիր բազմազանություն, ինչը վկայում է դրանց տարբեր ծագումնաբանության մասին: Որպես հին քրիստոնյաներ, ասորիներն ունեն հիմնական բոլոր քրիստոնեական, այդ թվում՝ տաղավար տոները: Պետք է նշել, սակայն, որ տա-

---

[1] **Լ. Սիմոնյան**, Տոմարային ծիսաշար, հատ. 1, «ՎՄՎ Պրինտ», 2006, էջ 23-24, 43: Լ. Սիմոնյան, Հայ ժողովրդական տոմար, ատենախոսություն, Երևան, 2013, էջ 66-75: Հետաքրքիր է նշել, որ դեռևս 19-րդ դ. ասորիների տարեգրությունն օգտագործում էր Սելևկյան թվականը, որն սկսվում է Ք. ա. 311 թ., տես՝ E. Smith, H. G. O. Dwight, Missionary Researches in Armenia: including a journey through Asia Minor and into Georgia and Persia, L., George Wightman, 1834, p. 405:

ղավար տոները Ասորի Արևելյան եկեղեցու մեջ յոթն են և ոչ՝ հինգը:

Հետևյալ աղյուսակում բերված են դրանց համապատասխանությունները հայկական տոներին.

1. Էդա սուռա (25 դեկտեմբերի) – Ս. Ծնունդ,
2. Էդա դԴընխա (6 հունվարի) – Հայտնություն,
3. Իդա գուռա [ժողովրդական ձևով՝ ջուռա]– Ս. Հարություն (Զատիկ),
4. Սուլակա – Համբարձում,
5. Փանտեկոստե – Հոգեգալուստ,
6. Էդա դԳյանա (6 օգոստոսի) – Պայծառակերպություն,
7. Էդա դՍլիվա (թարգմանաբար՝ Գյուտ խաչի[1], սեպտեմբերի 13) – Խաչվերաց[2]:

Իդա-սուռային Նոր Արտագերսի ասորիների մեջ հնում ընդունված է եղել վանքերից ջուր բերել և ցանել գերեզմաններին, նաև տալ հիվանդներին, քանի որ համարվել է, որ այն առողջացնելու զորություն ունի[3]:

Ինչպես նշում են Սմիթը և Դուայթը, Ուրմիայի ասորիների մեջ «... շատ տոների ժամկետներ և հատկապես Զատիկը, համապատասխանում է հայկական ծիսական տոմարին, բայց որոշները ընկնում են այլ օրերի: Ս. Ծնունդը կատարվում է դեկտեմբերի 25-ին»[4]: Հետաքրքիր է,

---

[1] Ջ. Փ. Բեդջերն այս տոնն անվանում է Խաչի հիշատակի և երկրպագության տոն և հայտնում է, որ այն նշվում է սեպտեմբերի 13-ին՝ երկարատև պատարագով, որի ընթացքում հնչում են Խաչին նվիրված բազմաթիվ աղոթքներ և ձոներգեր. J. P. Badger, The Nestorians and their rituals, vol. II, L. Joseph Masters, 1852, p. 132-133. Այլուր նույն հեղինակը նկարագրում է հանգուցյալների հիշատակի օրը, որը կատարվում է հոկտեմբերի որևէ շաբաթ օր, ծիսակարգն իրենից ներկայացնում է մատաղ-սիրաճաշ՝ նախապես մատաղացու կենդանիների և հացի վրա քահանայի կողմից կատարվող արարողությամբ և հաղորդությունով, որի ավարտին քահանան մատաղացու գառների բրդից մի փոքր կտրում էր և դնում խնկամանի մեջ, տես՝J. P. Badger,նշվ. աշխ., vol. I, էջ 229: Ակներև է, որ գոնե Ջուլամերկի լեռնական-ասորիների համար (նկարագրված արարողությունը վերաբերում էր նրանց) Խաչի տոնը և հանգուցյալների հիշատակի օրը առանձին տոներ են:

[2] Արևելքի Ասորի Առաքելական Ս. Եկեղեցու տաղավար տոների ցանկը հայտնել է Կաշա Նիկադիմ Յուխանանը:

[3] Հայտնել են Վիոլետտա Քոչոևան և Հռիփսիմե Խաչատրյանը. Լ. Սիմոնյան, ԴԱՆ, Նոր Արտագերս, 2019:

[4] **E. Smith, H. G. O. Dwight**, Missionary Researches in Armenia: including a journey through Asia Minor and into Georgia and Persia, L., George Wightman, 1834, p. 399.

որ Ա. Գրանտի վկայությամբ, ասորիների մեջ Զատիկը կոչվել է «Պասքա»[1]: Հայաստանի ասորիներին այս անվանումը ծանոթ չէ: **Փըսխա** ազգակից անվանումը ասորիների մեջ բնորոշում է ոչ թե Զատիկը, այլ Ավագ հինգշաբթին[2]: Զատկին ասորիները, ինչպես և հայերը, ձու են ներկում, կռվացնում, զանազան խաղեր խաղում ձվերով: Հայոց և ասորիների զատկական ծիսական տարբերությունների վերաբերյալ կա հետաքրքիր մի ավանդություն: Այսպես, հայերն իրենց Զատիկը նշում են՝ սկսելով երեկոյան ճրագալույցից, քանի որ «Հայերն առանց տեսնելու են հավատացել», իսկ ասորիները առավոտյան են նշում, քանի որ մինչև չտեսնեն, չեն հավատա՝ ճիշտ իրենց առաքյալ Ս. Թովմայի նման[3]:

Էդա գուռա-Զատիկը խորհրդային տարիներին նշվել է հունադավանների տոմարով՝ ռուսների հետ նույն օրը: Ներկայումս տոնակատարությունը համընկնում է հայոց Զատկի հետ: Արզնիի ասորիները, սակայն, այսօր էլ պահպանում են նաև հունադավանների ժամկետով Իդա Զուռա նշելու ավանդույթը[4]:

Էդա դ'Սլիվայի օրը ասորիները սովորույթ ունեն խարույկներ վառել և տները զարդարել խաչանշան-լույսերով: Այդ արարողությունը սկսվում է տոնից մոտ 1 շաբաթ առաջ: Ըստ ավանդության, երբ Հեղինե թագուհին գտել է Տերունական խաչը, կրակ են վառել, որ միմյանց բարի լուրի նշան տան: Ասորիներն այսօր էլ Զատկի երեկոյան ջահեր են տանում գերեզմաններ՝ հանգուցյալներին Քրիստոսի Հարության լուրը հայտնելու համար[5]:

Բացի այդ, ասորի ժողովուրդը նշում է նաև այլ տոներ, որոնք, անկախ այն բանից, պարունակում են եկեղեցական արարողություններ թե ոչ, հարկ է համարել բուն ավանդական: Ի տարբերություն եկեղեցական տաղավար տոների, ավանդական տոները կոչվում են «շառա», և դա վերաբերում է հավասարապես նաև սրբերի օրերին: Հայաստանի ասորի-

---

1 **A. Grant, Nestorians**, The Lost Tribes, L., John Murray, 1841, p. 190:

2 Հայտնել է Կաշա Նիկադիմ Յուխանանը: Հմմտ. «...հետևում է Զարչարանաց շաբաթը, որի... հինգշաբթին [կոչվում է] "պասքայի հինգերորդ օր"». J. W. Etheridge, The Syrian Churches, L., Longman, Brown, Green, and Longmans, 1846, p. 114:

3 **Լ. Սիմոնյան**, ԴԱՆ, Նոր Արտագերս, 2019:

4 **Լ. Սիմոնյան**, **Կ. Հովհաննիսյան**, ԴԱՆ, Արզնի, 2019:

5 Հայտնել է Կաշա Նիկադիմ Յուխանանը. **Լ. Սիմոնյան, Կ. Հովհաննիսյան**, ԴԱՆ, Դվին, 2019:

ները նշում են հետևյալ ավանդական տոները և սրբերի օրերը.

1. Ռիշիթա («ռիշըթ շիթա» - տարեգլուխ իմաստով) – ժամանակակից հունվարյան Նոր տարին է: Որպես համեմատաբար նոր տոն, այն նշվում է նույն ձևով, ինչ հարևան ժողովուրդների մոտ: Այդ օրը Նոր Արտագերսի ասորիների սեղանին դրվում է ոչ մեծ գնդիկների տեսք ունեցող քաղցր խմորեղեն, որը կոչվում է «շամիռամ»[1]՝ անվանի թագուհու անունով և, հավանաբար, առաջացել է խորհրդային տարիներին: Բնականաբար, Հայաստանի պետական ամանորը՝ հունվարմեկյան Նոր տարին, ևս նշում են: Այդ օրն ընդունված է սեղանին դնել նաև «տակուլակ»՝ թթու դրված փոքրիկ ձմերուկներ: Ոչ վաղ անցյալում եղել է այսպիսի սովորություն. Նոր տարվա երեկոյան տան ավագ կինը որևէ տեղ դրամ է պահել, իսկ երբ ամանորյա զանգերը խփել են, հանկարծ «գտել է» այդ դրամը և բուռն ոգևորությամբ հայտնել այդ մասին[2]: Անկասկած, այս սովորույթը մտնում է ամանորյա հմայությունների շարքի մեջ:
2 Նուսարդել (Նուսարդի, Մուսարդի) – ժամկետով և ժողովրդական ծեսերով համընկնում է հայկական Վարդավառի, բայց ոչ՝ եկեղեցական Պայծառակերպության տոնի, հետ: Նուսարդելը բերքի տոն է, ահա թե ինչու նշվում է համատեղ ճաշկերույթով, միմյանց այցելելով և երգ ու պարով[3]: Տոնի անվանումը ոչ այլ ինչ է, քան և՛ հայոց մեջ, և՛ ասորիների մեջ պահպանված հնամենի Նավասարդի տոնը, որը ամառային Արևադարձի շրջանում նշվող ամանորն էր:
3. Խաբի Նիսան (բառացիորեն՝ Նիսան ամսի (ապրիլի) 1-ը), գարնանամուտի տոնն է, որը, թերևս, ավելի բնորոշ է եղել Իրաքի, քան Ուրմիայի կամ Ջուլամերկի ասորիներին և, հավանաբար, չի նշվել խորհրդային տարիներին: Այդուհանդերձ, կա ավանդություն, կապված Խաբի Նիսանի և արևմտյան (նաև հայերի մեջ ներկայումս տարածված) «սուտլիկի» օրվա համընկնումի հետ: Ըստ Ա. Ավչիևայի՝ իր հայրը պատմում էր, որ հնում այդ օրը թագավորն իրեն երեք օրով

---

[1] **Լ. Սիմոնյան**, ԴԱՆ, Նոր Արտագերս, 2019:

[2] Հայտնել է Վիոլետտա Քոչոևան:

[3] Հայտնել են Ֆելիքս Խաչատրյանը, Միխայիլ Ավչյանը. Լ. Սիմոնյան, ԴԱՆ, Նոր Արտագերս, 2019: Ա. Ավչիևան այս տոնի վերաբերյալ մտաբերեց հոր խոսքերը, որ տարին պետք է բերք ու բարիքով դիմավորել:

ժամանակավոր տեղապահ էր կարգում իր մասխարա-ծաղրածուին, ժողովուրդն էլ աղքատի շորեր էր հագնում: Մասխարան ուրախացնում էր ժողովրդին իր կատակներով, ահա թե ինչու այդ տոնը մնացել է ավանդույթի մեջ որպես ծիծաղի օր[1]:

Սուբարա (Ավետում) տոնի հատուկ տոնակատարության մասին տեղեկություններ գտնել դեռևս չի հաջողվել:

Սրբերի հիշատակության օրեր

Սրբերի օրերը ևս զգալի տեղ են գրավում ասորիների հոգևոր կյանքում: Սովորաբար, առավել մեծ շուքով նշվում են այն բնակավայրերում, որտեղ գտնվում են այդ սրբին նվիրված սրբավայրերը: Այսպես, 1912 թ. սեպտեմբերի 19-ին երբեմնի Ջուլամերկի անկախ ասորիների մեջ ռուս դիվանագետ Ս. Պ. Օլֆերիևը մասնակցել է Քոչանիսի Մար Շալիտայի (Ս. Շաղիտայի) տոնին[2]: Նրա հակիրճ նկարագրությունը պարունակում է հիշատակություն պատարագի, ձիարշավի և պարերի մասին: Վերջիններն ուղեկցվում էին երգով և կրակոցներով[3]: Նույն ամսին նա հիշատակում է ևս մեկ նման տոն՝ Մար Սավայի (Ս. Սաբայի) տոնը նույնանուն վանքում: Այդ օրը Թիարի գավառակի գրեթե ամբողջ բնակչությունը հավաքվում էր վանքի մոտ, տեղավորվելով կամ բացօթյա, կամ հատուկ ուխտավորների համար քարերից պատրաստված ոչ մեծ հյուղակների մեջ: Ուխտի օրերին վանքն անվճար կերակրում էր ուխտավորներին, որոնք իրենց հերթին նվիրատվություններ էին կատարում վանքի օգտին: Այդ օրը ժողովուրդն ընտրում էր Մար Սավայի վանքի կապալառուին, որը հետո հաստատվում էր Մար Շիմունի կողմից և փոխվում էր ամեն տարի: Վանքապատկան հողում բրինձ էր աճեցվում, որից պատրաստված շիլան համարվում էր տոնի գլխավոր ուտեստը[4]:

Այդ տոները Հայաստանի ասորիները չեն նշում, և պատճառը միանգամայն օբյեկտիվ է. սրբի այդ օրերը կապված էին կորուսյալ հայրենիքում գտնվող սրբավայրերի հետ: Այդ սրբավայրերը մեծամասամբ գտնվում էին Ջուլամերկում, որի բնակչության հիմնական մասը նկարագրվող

---

1 **Լ. Սիմոնյան**, ԴԱՆ, Նոր Արտագերս, 2019:

2 **С. П. Олферьев**, В верховьях Тигра, М., Институт Востоковедения, 2017, с. 47.

3 **С. П. Олферьев**, նշվ. աշխ., էջ 47.

4 **С. П. Олферьев**, նշվ. աշխ., էջ 60-61.

ժամանակաշրջանից ընդամենը մի քանի տարի անց ենթարկվել է ցեղասպանության, իսկ վերապրածների սերունդները և Պարսկաստանից Հայաստան վերաբնակեցվածները հնարավորություն չեն ունեցել պահպանելու այդ ավանդույթը:

Սակայն, ինչպես նշեց Կաշա Նիկադիմ Յուխանանը, գոնե Մար Սավայի տոնի ծիսաճաշը ներկայումս պահպանվել է Ուրմիայի ասորիների մեջ: Այն կոչվում է **գյառդու**, պատրաստվում է հետևյալ կերպ. մածունը եռացնելով պնդացվում է, բրինձ ավելացնելով եփվում է, իսկ մատուցելուց թահինը եփում են յուղով և որպես սոուս ավելացնում գյառդուի վրա: Գյառդուն ներկայումս էլ համարվում է շաբաթապահքի օրերին (չորեքշաբթի և ուրբաթ) գործածվող ուտեստ:

Սրբի օրերի մեկ այլ, ներկայումս լավ պահպանված և սիրված ասորական ուտեստն է **մըռթուխա**ն: Մենք առիթ ենք եղել ներկա լինել այդ ուտեստի պատրաստման և բաշխման արարողությանը 2016 թ. հուլիսի 3-ին՝ Մար Թումայի տոնի օրը: Ամբողջ գյուղի և հնարավոր մեծաքանակ հյուրերի համար մըռթուխա պատրաստելու համար տոնի հյուրընկալները (այն գյուղի բնակիչները, որտեղ գտնվում է տոնվող սրբին նվիրված եկեղեցին կամ մատուռը) հավաքում են մեծ քանակության ալյուր, ձու, յուղ և կաթ, որը (սկզբում յուղն ու ալյուրը, հետո օրինված աղը, հարած ձուն, վերջում՝ կաթը) հետևողականորեն լավ հարում են մեծ կաթսայի մեջ մեծ փայտով՝ եկեղեցու մոտ դրսում դրված որևէ օջախի վրա: Հարում են միայն տղամարդիկ, առաջին հերթին՝ քանի որ գործողությունը բավական ֆիզիկական ուժ է պահանջում, երկրորդ՝ որովհետև այդպիսին է ավանդույթը: Եփվելով, զանգվածը դառնում է ոչ քաղցր հալվայի նման, որն ափսեներով բաժանվում է բոլոր ցանկացողներին:

Մըռթուխան բաժանելու կանոններ կան. առաջինը բաժին է հանվում հղիներին և հիվանդներին, տարեցներին: Հետո տրվում է հեռվից եկած ուխտավորներին, որոնք այցելում են մատուռը կամ չգործող եկեղեցին խնամողի տունը[1]:

Համարում են, որ Մըռթուխան ունի նաև հրաշալի հատկություններ: Եթե մըռթուխան առաջինն ուտողը ինչ-ինչ պատճառով այն դիպցնում է մարմնի որևէ մասին, այդտեղ բնական նշան (պիգմենտացիա) է առաջա-

---

[1] Հայտնել են Միխայիլ Ավչյանը, Անահիտ Բաղալյանը. Լ. Սիմոնյան, ԴԱՆ, Նոր Արտագերս, 2019:

նում: Հատկապես դա վերաբերում է հղի կանանց, երբ մըռթուխայի հպումը դառնում է երեխայի մարմնի վրա բնածին նշան լինելու պատճառը[1]:

Սրբի օրերից Հայաստանում նշվում են Մարեզը, Մար Սարգիսը, Մար Թուման:

1. Մար Զայա, կամ ժողովրդական արտասանությամբ՝ Մարեզ (հունվարի 2-ին և հունիսի 14-ին՝ Վերին Դվինում և հուլիսի վերջին շաբաթ՝ Դիմիտրովում): Երկու անգամ նշվելու և Դիմիտրովում ու Դվինում առանձին տոնական ժամկետներ ունենալու համար ժողովրդի մեջ ասվում է, որ իրենք «երկու Մարեզ ունեն»:

Մար Զայան ասորիների սրբի տոներից առավել յուրօրինակն է: Ս. Օլֆերիևը նշում է, որ այդ սրբին նվիրված վանքն իր նմանը չուներ ամբողջ Ջուլամերկում: Այն գտնվում էր Ջիլուի Մաթա գյուղի մոտ, կառուցված էր, ըստ ասորալեզու գրվածքների, Ք. հ. 3-րդ դ.և մեծ համբավ ուներ ասորիների մեջ, գուցե կատարելով մոտավորապես այն դերը, որը հայոց մեջ վերապահված էր Մշո Ս. Կարապետին: Եկեղեցու պատերից մարդիկ կախում էին նվիրաբերվող հագուստը: Ինչպես նշում է Օլֆերիևը, ասորիների մեջ ընդունված է եղել իրենց լավագույն հագուստը նվիրել վանքին՝ որևէ ծանր հիվանդության դեպքում: Դրանք չէին սեփականվում հոգևորականների կողմից և չէին վաճառվում հօգուտ վանքի, այլ կախված էին մնում իբրև վանքի զարդարանք: Ըստ ավանդության՝ Մաթայի Մար-Զայա վանքում պահվում էր նաև այն մետաքսե գլխաշորը, որը վանքին նվեր էր բերել Մուհամեդ մարգարեն: Օլֆերիևը նշում է, որ այդ գլխաշորի վրա գրված էին Մեքքայի և Մեդինայի անունները, իսկ հավատացյալները վստահ էին, որ հենց այդ մասունքի շնորհիվ էր, որ վանքի վրա երբեք չէին հարձակվում մուսուլմանները[2]: Ցավոք, ի վերջո այդ զորավոր պատվարը ևս ընկավ, և մեր օրերում լեգենդար սրբավայրը լքված է և կիսավեր:

Սիրված սրբին ասորիները նվիրել են բազմաթիվ սրբավայրեր՝ եկեղեցիներ, վանքեր, մատուռներ: Այդպիսիք կան ինչպես Իրաքում և Սիրի-

---

[1] Հայտնել են Լյուսյա Եդիգարովան (1938 թ. ծնվ.) և Դոնարա Թամրազովան. Լ. Սիմոնյան, Կ. Հովհաննիսյան, ԴԱՆ, Վերին Դվին, 2019:

[2] **С. П. Олферьев**, նշվ. աշխ., էջ 79-80.

այում, այնպես էլ Իրանում:

Մարեզ սրբավայր ունեն նաև Վերին Դվինի բնակիչները: Ըստ ավանդության՝ ներգաղթած ժողովուրդն իր հետ հող է բերել իր հայրենի Մար Զայա եկեղեցուց և լցրել է ներկայիս մատուռի հիմքում: Վերին Դվինի Մարեզը (Մար Զայան) սիրված սրբավայր է, որին այցելում են ցանկացած առիթով և մոմ են վառում հատուկ հատկացված տեղում՝ եկեղեցու բակում[1]: Այն ունի ասորիների ազգային ինքնության խորհրդանիշի գործառույթը, սակայն այստեղ սիրով գալիս են նաև հարևան գյուղերում բնակվող հայերը: Հատկապես տոնի օրը՝հունիսի 14-ին Մարեզ սրբավայրում կատարվում են մատաղներ, արվում է մեծ տոնախմբություն:

2. Մար Սարգիս (Ս. Սարգիս, նշվում է հայերի հետ նույն օրը):

Ինչպես հայ, այնպես էլ ասորի երիտասարդները Ս. Սարգսի օրը գուշակություններ են անում ապագա ամուսնության մասին: Սակայն, ի տարբերություն աղի բլիթի, աղանձի կամ փոխնդի, այդ օրվա համար պատրաստվում է **փուխում** կոչվող հատուկ կերակրատեսակը, որի բաղադրությունը կազմում են բոված և երկանքով աղացած յոթ տեսակի հատիկեղեն: Այդ տեսակները կարող են տեղ-տեղ տարբերվել և, հավանաբար, փոփոխական են (ներկայումս գործածվում են արևածաղիկը, հնդկաձավարը և այլ հատիկեղեն, որ ժամանակակից ասորիների նախնիներին կարող էին ծանոթ չլինել): Պարտադիր է, սակայն, որ առաջացած փոշի-զանգվածին ավելացվի նաև յոթ պտղունց աղ: Փուխումն օրհնվում է և բաժանվում եկեղեցում: Երիտասարդները, որոնք մինչ այդ, սկսած երեկոյան ժ. 18.00 ո'չ ուտում են, ո'չ ջուր խմում, ստանում են փուխումի իրենց բաժինը և ուտում: Հաճախ նրանք ևս, ինչպես հայ երիտասարդները՝ աղի բլիթի դեպքում, նույն գիշերը երազում տեսնում են իրենց ապագա փեսացուին[2]:

3. Մար Թումա (հուլիսի 3) – Ս. Թովմա առաքյալի տոն, որը հանդիսավոր կերպով նշվում է Վերին Դվինում՝ համանուն եկեղեցում:

Այս տոնի կապակցությամբ հետաքրքիր տեղեկություն է հայտնում Պ. Էյվազովը. Դիմիտրով (նախկին Կոյլասար) գյուղից ոչ հեռու կա մի

---

[1] Հայտնել է Լյուսյա Եդիգարովան. Լ. Սիմոնյան, Կ. Հովհաննիսյան, ԴԱՆ, Վերին Դվին, 2019:

[2] Հայտնել են Վիոլետտա Քոչոևան. Լ. Սիմոնյան, ԴԱՆ, Նոր Արտագերս, 2019, և Դոնարա Թամրազովան. Լ. Սիմոնյան, Կ. Հովհաննիսյան, ԴԱՆ, Վերին Դվին, 2019:

հանքային ջրի աղբյուր, որտեղ Ս. Թովմայի օրը Դիմիտրովի և հարևան գյուղերում ապրող ասորիները գնում են լողանալու, համարելով, որ դրանով իսկ ապաքինվում են ինչ-ինչ հիվանդություններից[1]:

4. Մաթ Մարիամ (Շառա դ'Մաթ Մարիամ, կամ ուղղակի Շառա) – Ս. Աստվածածնի Վերափոխում, որը առավել շուքով նշվում է Արզնիում՝ Ս. Մարիամին նվիրված եկեղեցու շուրջ: Այդ տոնը նշվում է երկու օր՝ օգոստոսի 27-ի երեկոյից մինչև օգոստոսի 28-ի երեկո: Մատուցվում է հասարակական մատաղ, այսինքն, գյուղի բնակիչները կամավորության սկզբունքով ֆինանսական մասնակցություն են ունենում մատաղի ցլիկի ձեռքբերմանը: Երեկոյան պատրաստվում ու բաժանվում է մըռթուխան, և մինչև ուշ գիշեր ժողովուրդը, հավաքված գյուղի հրապարակում, պարում է և երգում: Հաջորդ օրը առավոտյան եկեղեցում մատուցվում է հատուկ օրվա պատարագը, որից հետո բաժանվում է մատաղի միսը և հացը: Այդ օրը բացի հասարակական մատաղից շատ են նաև անհատական մատաղները: Գառներին բերում են եկեղեցու բակ, յոթ անգամ մատաղացուի հետ շրջում են եկեղեցու շուրջ: Մորթելիս երբեմն մի քանի կաթիլ արյուն են ցողում եկեղեցու շեմին: Դրանից հետո տոնը տեղափոխվում է ընտանիքներ, որտեղ սեղաններ են գցում և հյուրեր ընդունում[2]:

Շառայի առիթով հարկ է մի քանի խոսքով նկարագրել ասորական մատաղը (**դուխռանա**): Առավել հատկանշականը հայ դիտորդի համար այն է, որ ասորիներն օրհնված աղ են տալիս ոչ միայն գառներին, այլև աքաղաղներին: Ինչպես տեսանք, ի տարբերություն հայերի, որոնց մեջ հասարակական մատաղը որպես այդպիսին վերացել է, տեղ-տեղ փոխարինվելով գյուղապետի կամ որևէ մեծահարուստի կողմից ամբողջ գյուղի կամ որևէ սրբավայրի բոլոր ուխտավորների համար տրվող մատաղով, ասորիները պահպանել են հին՝ դրամահավաքի միջոցով արվող մատաղի արարողությունը: Համարվում է, որ մատաղը անպայման պետք է տանից դուրս հանվի, և սովորաբար այն բաժանում են եփված, թասերով՝ մսաջրի հետ (հացը, որ նույնպես դուխռանա է, բաժանվում է առանձին) յոթ կամ տասներկու ընտանիքների և միայն ավելանալու դեպքում ճաշակում են ընտանիքի անդամների հետ[3]:

---

[1] **П. Эйвазовъ**, նշվ. աշխ., էջ 289:

[2] **Ա. Ավչիևա, Լ. Սիմոնյան, Կ. Հովհաննիսյան**, ԴԱՆ, Արզնի, 2019:

[3] Հայտնել է Միխայիլ Ավչյանը. Լ. Սիմոնյան, ԴԱՆ, Նոր Արտագերս, 2019:

Դուխռանայի վերաբերյալ գոյություն ունի ավանդություն. մի անգամ մատաղի հոտն ընկել է մի հղի կնոջ քիթը, նա շատ է ցանկացել ճաշակել մատաղից, բայց ամաչել է խնդրել տիրոջից և ուղղակի գողացել-կերել է մի կտոր: Գիշերը մատաղի տերը երազ է տեսել, որում նրան հայտնվել է հրեշտակը և ասել, որ Աստծո առաջ ընդունելի է եղել մատաղի միայն այն մասը, որը կերել է այն հղի կինը: Դրանից հետո սովորույթ է դարձել մատաղը տնետուն բաժանելը[1]:

5. Մար Կյուրիակոս, կամ ժողովրդական արտասանությամբ՝ Մար Կուսյակու (հուլիսի 28):

Այս տոնը կատարվում է Դիմիտրով գյուղի Ս. Կիրակոսի և Հուղիտայի հունադավան (Ռուս Ուղղափառ) եկեղեցում: Ինչպես գրում է Պ. Էյվազովը, դեռևս 19-րդ դ. այդ տոնին (նա արձանագրում է հուլիսի 15-ը, ինչը վկայում է, որ այդ ժամանակ տոնը նշվում էր նոր, իսկ այժմ՝ հին տոմարով) ժողովուրդը կամավոր դրամահավաք է անում, և հավաքված գումարով գնում էին մի լավ ցլիկ, որին մատաղ էին անում: Տոնի նախօրեին նաև թարմ հաց (լավաշ) են թխում, որը տոնի օրը առավոտյան բաժանում են աղքատներին[2]:

6. Մար-Գևառգիզ (տարին 2 անգամ՝ ապրիլի 24-ին և հոկտեմբերի վերջին չորեքշաբթի օրը) – Ս. Գևորգի տոնն է, որն ասորիները նշում են ներկայումս գրեթե լքված՝ Արարատի մարզի Գոլայսոր գյուղի Մար Գևառգիզ սրբավայրում[3]:

Ասորիներն ունեն նաև այնպիսի տոներ և սրբի օրեր, որոնք նշում են հայերի հետ համատեղ: Այսպիսին է, մասնավորապես, Ս. Դավիթ Դվնեցու օրը, որը շուքով նշվում է Կանաչ Կիրակի (Արմավիրում՝ Կանաչ-կարմիր կիրակի, Զատկի հաջորդ կիրակին) օրը՝ Գետազատի և Նոր Արմավիրի Ս. Դավիթ սրբավայրերում[4]: Այդ օրը ևս մատաղ են մատուցում և համատեղ ճաշկերույթների են նստում: Արզնիի Թուխ Մանուկ սրբավայրը ևս ունի իր տոնը (օգոստոսի 30), որը նորոգված սրբավայրի օծման

---

[1] Հայտնել է Անահիտ Բաղայյանը. Լ. Սիմոնյան, ԴԱՆ, Նոր Արտագերս, 2019:

[2] **П. Эйвазовъ**, նշվ. աշխ., էջ 318-319:

[3] Հայտնել է Կաշա Նիկադիմ Յուխաննաևը. Լ. Սիմոնյան, Կ. Հովհաննիսյան, ԴԱՆ, Վերին Դվին, 2019:

[4] **Կ. Յովհաննիսեան, Ս. Յիզտբուզիտ**, Ս. Դաւիթ Դվնեցի եւ Թուխ Մանուկ, Էջմիածին, 2018, թ. Ժ, էջ 83-84:

օրն է, և այդ օրը սրբին ուխտի են գնում շրջակա բնակավայրերի ասորիներն ու հայերը[1]:

Ասորիները ունեն նաև իրենց հատկանշական պահքերը: Հասկանալի պատճառներով պահեցողության ավանդույթը գրեթե վերացել է խորհրդային տարիներին: Այդուհանդերձ, արժե հիշատակել դրանց գոնե Նինվեացոց պասը, որը կարևոր դերակատարում է ունեցել պատմության մեջ:

Ինչպես նշվեց, ասորիները ևս նշում են Մար Սարգսի տոնը: Այդ տոնին նախորդում է Նինվեացոց, կամ Հովնան մարգարեի պահքը: Այն իր Թուղթ ընդհանրականի մեջ հիշատակում է Ս. Ներսես Շնորհալին: Խոսելով Առաջավորաց պահքի մասին, նա գրում է, որ այն ժամանակով համընկնում է ասորիների և եգիպտացիների Նինվեացիների պահքի հետ, որից հետո էլ նշվում է Ս. Սարգսի հիշատակը[2]: Այդ պահքի մասին գրում է նաև պատվելի Ուիլյամ Ռուբրուկը, որը շեշտում է, որ հայերի պահեցողությունը, որը կոչվում է Ս. Սարգսի պաս, տևում է հինգ, իսկ նեստորականներինը, որը կոչվում է Նինվեացիների, կամ Հովնանի պաս՝ երեք օր[3]: Ջ. Պերկինսը Ջուլամերկում ներկա է գտնվել այդ պահքի մուտքին, որը տեղի է ունեցել 1850 թ. փետրվարի 1-ին: Այդ առիթով նա գրում է, որ ասորիների պահքերը սկսվում են Մալ-սոմա կոչվող տոնով և ավարտվում են Էդա կոչվող տոնով[4]: Ինչպես մեկնաբանեց Կաշա Նիկադիմը, ավելի ճշգրիտ անվանումն է Մաալայ սոմա, որ նշանակում է «պահքի մուտք» և իր էությամբ բարեկենդան է: Հավանաբար, Բարեկենդանի պես Մաալայ սոման նշվել է ոչ բոլոր վայրերում կամ եղել է ինչ-որ տեղական առանձնահատկություն: Այսպես, Սմիթը և Դուայթը Ուրմիայում 1831 թ. մարտի 13-ին ներկա են գտնվել ասորիների և հայերի Մեծ Պահքի մուտքին: Այս առիթով նրանք գրում են, որ քանի դեռ հայերն ուրախ Բարեկենդան էին նշում, ասորիներն այդ ժամանակ նախորդող

---

1 **Լ. Սիմոնյան, Կ. Հովհաննիսյան**, ԴԱՆ, Արզնի, 2019:

2 Նամականի ԺԲ դար. Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցություններ, Սբ Ներսես Շնորհալի, Ս. Էջմիածին, Մայր Աթոռ, 2011, էջ 94-95:

3 The Journey of William of Rubruck to the Eastern Parts of the World, 1253-1255, L., Hakluyt Society, MDCCCC (1800), p. 186.

4 **J. Perkins**, Residence of Eight Years in Persia, Andover, Allen, Morrill & Wardwell, 1843, p. 253.

երեկոյից սկսած՝մտել էին Մեծ Պահքի մեջ[1]: Ներկայումս Պահքից առաջ որևէ տոնակատարություն հայտնի չէ:

Հայաստանաբնակ ասորիների ծիսական վարքի, սրբավայրերի և սովորույթների ուսումնասիրությունը շարունակվում է և կարող է ընձեռել նոր և անհայտ նյութ:

Բանալի բառեր *- Հայաստանի ասորիներ, կրոնական տոներ, շառա, դուխ-ռանա, սրբի օր, Մարեզ*

АССИРИЙЦЫ АРМЕНИИ: РЕЛИГИОЗНО-ТРАДИЦИОННЫЕ И НАРОДНЫЕ ПРАЗДНИКИ

Лилит Симонян, Карен Оганесян

Ключевые слова: *Ассирийцы Армении, религиозный праздник, шара, духрана, дни святых, Марез*

Праздники проживающих в Армении ассирийцев хотя во многом и схожи с армянскими, существенно отличаются от них. У ассирийцев семь, а не пять господских праздников, а из дней святых наиболее известны праздники Мар Зайи, Мат Мариам и Мар Тумы. Дни святых и народные праздники называются **шара**, тогда как господни праздники – **эда** (ида). В основном ассирийцы сохранили старые даты празднования господских праздников.

Ассирийцы Армении сохранили главнейшие яства религиозных праздников: **мртуху**, **гярду** и **пухум**, а также ритуальные каноны их приготовления и легенды об их происхождении.

В целом ассирийское жертвоприношение (**духрана**) отличается от армянского матаха только несколькими характерными деталями, однако сохранилось в своем древнем обличье.

Исследования в этой малоизученной области знания продолжаются, и ожидаются новые результаты.

---

[1] **E. Smith, H. G. O. Dwight**, նշվ. աշխ., էջ 385-386:

THE ASSYRIANS OF ARMENIA: RELIGIOUS-TRADITIONAL AND FOLK FEASTS

Lilit Simonian, Karen Hovhannisyan

Key words: *Assyrians of Armenia, religious feasts, shara, dukhrana, commemoration of saints, Marez*

The feasts of Assyrians inhabiting Armenia in many features are similar with the Armenian ones, nevertheless they are essentially different. The Assyrians have seven and not five Major festivals, and of the commemoration days of saints Mar Zayya, Mat Mariam and Mar Tuma are the most popular festivals. The commemoration days of saints as well as folk festivals call ***shara***, while Major feasts – ***eida*** or ***eeda***. In general the Assyrians have preserved old dates of festivities for Major feasts.

The Assyrians of Armenia have maintained the main dishes of religious feasts such as **Mertukha**, **Gyarda** and **Pukhum**, as well as ritual norms of their preparation and legends about their origination.

In general the Assyrian sacrifice (**dukhrana**) is different from the Armenian *matagh* only in several characteristic details but it remained in its ancient form.

The investigation of that little researched area of knowledge continues, and new results are expected.